ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» հուլիսի 2022 թվականի № 374 -Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 127-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին, 102-րդ հոդվածի 3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի №256-Ա որոշման 1-ին կետը, թիվ 33 տարածքային ընտրական հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 10-ի №30-Ա և №31-Ա որոշումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական ընտրությունը՝ համամասնական ընտրակարգով նշանակել 2022 թվականի սեպտեմբերի 25-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչություն, Հայաստանի Հանրապետության թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է